



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 մայիսի 2019թ. թիվ 353-Ա

**«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ  
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ՋԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ  
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մայիսի 15-ի թիվ 345-Ա որոշման հիման վրա համակարգում նախօրոք գետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 21.05.2019թ. ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Վալերի Զաղինյանին:

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԴՈՒԿԱՅԱՆ

2019թ. մայիսի 20  
ք.Վանաձոր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կ ա զ մ

- Արթուր Մխիթարյան - ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ
- Ռաֆայել Հարությունյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ
- Լևոն Բերոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ
- Արտակ Օհանյան - ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ
- Վալերի Զաղինյան - ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
- Արտավազ Բեջանյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
- Ռուբեն Խանզադյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X



ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ